ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԻԿՈՆԻԱՅԻ ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 1218 Թ. ԿՆՔՎԱԾ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՈՒՐՋ

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կիլիկիայի հայկական թագավորության պատմության ամենակարևոր և հետաքրքիր շրջաններից մեկը Լևոն Մեծագործի (1187-1219) կառավարման ժամանակահատվածն է: Հայտնի է, որ հայոց արքան իր բացառիկ տաղանդի և ընդունակությունների շնորհիվ կարողացավ հասնել նրան, որ Կիլիկիայի հայկական իշխանությունը միջազգայնորեն ճանաչվեց որպես թագավորություն: Հարկ է նշել, որ հայկական թագավորության պատմության տարբեր խնդիրների շուրջ հրատարակվել են մի շարք աշխատություններ, սակայն մինչև օրս որևէ հետազոտող պատշաճ ուշադրություն չի դարձրել Կիլիկիայի հայկական թագավորության արտաքին քաղաքականության և դիվանագիտության պատմության ուսումնասիրությանը: Մասնավորապես, առանձնահատուկ ուշադրության են արժանի 12-13-րդ դարերում հայկական թագավորության հարաբերությունները Իկոնիայի սուլթանության հետ: Այդ հարաբերություններում չափազանց կարևոր է Կիլիկիայի հայոց արքա Լևոն Մեծագործի և Իկոնիայի սուլթան Իզզ էդ-դին Քեյ-Քավուսի (1211-1220) միջև կնքված հաշտության պայմանագիրը, որն առ այսօր որևէ հետազոտողի կողմից հատուկ ուշադրության չի արժանացել: Պետք է նաև նշել, որ Կիլիկիայի հայկական թագավորության պետական մարմինների արտաքին քաղաքական գործունեությունը 12-րդ դարի վերջերին և 13-րդ դարի սկզբներին ուներ բացառիկ կարևորություն, քանի որ տվյալ ժամանակահատվածում միջազգային իրադրությունը Մերձավոր Արևելքում շարունակում էր մնալ խիստ լարված: Խնդիրն այն է, որ մի կողմից տեղի էին ունենում 3-րդ, 4-րդ և 5-րդ խաչակրաց արշավանքները[1] և ուժեղանում էր պապական դիվանագիտությունը Մերձավոր Արևելքում, մյուս կողմից թուլանում էր Բյուզանդական կայսրությունը: Բացի այդ, այս ժամանակահատվածում շարունակում էին տարածաշրջանում իրենց դիրքերը ամրապնդել Մերձավոր Արևելքի արաբական երկրները, խաչակրաց իշխանությունները, որոնց մի մասի հետ հայկական թագավորությունը ուներ բարիդրացիական հարաբերություններ: Ինչ վերաբերում է Իկոնիայի սելջուկյան սուլթանությանը, ապա պետք է նշել, որ նրանք նույնպես նշյալ ժամանակաշրջանում տակավին հզոր էին և լուրջ վտանգ

[1] Տե՛ս **Thomson R. W.** The Crusades through Armenian eyes, www.Doaks.Org, **Hillenbrand C.** The Crusades, Islamic perspectives, Edinburg, 1999, www.books.google.am, **Gazarian J. G.** The Armenian kingdom in Cilicia during the crusades, The integration of Cilician Armenians with the Latins, 1080-1393, Caucasus World, 2000, www.books.google.am, **Riley-Smith**. **J.** The Oxford history of the Crusades, OUP, 2000, www.books.google.am, **Морисон С.** Крестоносцы. М., 2003, էջ 29-70, **Madden T. F.** The new concise history of the crusades, Oxford, 2005, www.books.google.am

էին ներկայացնում հայերի համար: Այսպիսով, միջազգային նմանատիպ իրավիճակում Կիլիկիայի հայկական թագավորության արտաքին քաղաքականության պետական մարմինները պետք է շատ զգույշ և հաշվենկատ դիվանագիտություն կիրառեին հարևան երկրների հետ հարաբերություններում:

Վերադառնալով Լևոն Մեծագործի և սուլթան Իզզ էդ-դին Քեյ-Քավուսի միջև կնքված պայմանագրին՝ նշենք, որ այն չափազանց կարևոր է հայկական թագավորության արտաքին քաղաքականության և դիվանագիտության պատմության ուսումնասիրության առումով: Հայտնի է, որ Լևոն Մեծագործը իր կառավարման ժամանակաշրջանում կարողացավ մի շարք տարածքներ նվաճել և ընդարձակել իր պետության վարչական սահմանները:

1216 թ. Իկոնիայի սուլթանության զորքերը, օգտվելով այն հանգամանքից, որ Լևոն Մեծագործը գտնվում է Անտիոքում, հարձակվեցին Կիլիկիայի հայկական թագավորության վրա[2]: Սմբատ Սպարապետը այս արշավանքի պատճառ է համարում այն, որ տարիներ առաջ հայոց արքան, օգտվելով սելջուկների ժամանակավոր թուլացումից, Կիլիկիային էր միացրել Կեսարիան, Առակլին և Լարանդան[3]: Թեև թշնամու զորքերին չհաջողվեց գրավել Կապանի ամրոցը, սակայն նրանից ոչ հեռու գտնվող Շողական ամրոցի մոտ տեղի ունեցած ճակատամարտում հայկական բանակը բավականին կորուստներ ունեցավ, նաև գերվեցին Կոստանդին Գունդստաբլը և մի քանի այլ իշխաններ: Որոշ ժամանակ անց Կիլիկիայի հայոց արքան Կոստանդին Գունդստաբլին և մյուս իշխաններին ազատելու համար ստիպված էր ծանր տարածքային զիջումների ու նյութական կորուստների գնով հաշտության պայմանագիր կնքել Իկոնիայի սուլթան Իզզ էդ-դին Քեյ-Քավուսի հետ:

Սույն հոդվածում մանրամասն ներկայացնելով պայմանագրի բոլոր կետերը, փորձենք ճշտել, թե որ թվականին է կնքվել այն, ինչպես նաև՝ դրանից հետո ինչ փոփոխություններ տեղի ունեցան Կիլիկիայի հայկական թագավորության արտաքին քաղաքականության մեջ:

Նախ՝ պայմանագրի կնքման թվականի շուրջ: Այսպես, հետազոտողների մեծ մասը, հաշվի առնելով խնդրի բարդությունը, խուսափում է պայ-

---

[2] Տե՛ս **Հեթում Պատմիչ**, Պատմութիւն թաթարաց, Վենետիկ, 1842, էջ 82, **Միքայել Ասորի**, Ժամանակագրութիւն, Յերուսաղէմ, 1871, էջ 511, **Սամվել Անեցի**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 146, «Մանր ժամանակագրություններ 13-18-րդ դարերի», հ. Բ, կազմեց՝ Հ. Հակոբյանը, Եր., 1951, էջ 63, **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 219, **Ա. Մաթևոսյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԳ դարի, Եր., 1986, էջ 101, **Ибн Биби.** Сельджук-Наме, www.vostlit.info: Այդ մասին տես նաև՝ **Ղ. Ալիշան**, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 518, 553, **Ա. Ալպոյաճյան**, Պատմութիւն հայ Կեսարիոյ, Գահիրէ, 1937, էջ 510-511, **Гордлевский В.** Государство Сельджукидов в Малой Азии. М.-Л., 1941, էջ 15, «Հայ ժողովրդի պատմություն», հ. Գ, Եր., 1976, էջ 692-693, **Boase T. S. R.** The Cilician Kingdom of Armenia, New York, 1978, էջ 22, **Վ. Տեր-Ղևոնդյան**, Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները 1145-1222 թվականներին, Եր., 1994, էջ 125, **Mutafian C.** The Brilliant Diplomacy of Cilician Armenia, Armenian Cilicia, Edited by R. Hovhannisian and S. Payaslian, California, 2008, էջ 103, History of Armenia by Macler F., The Cambridge Medieval History, www.third-millennium-library.com

[3] Տե՛ս **Սմբատ Սպարապետ**, Պատմութիւն, Մ., 1856, էջ 107:

մանագրի կնքման տարեթիվը նշելուց[4], իսկ մի մասն էլ տարբեր թվականներ է նշում. այսպես, Վ. Տեր-Ղևոնդյանը այն համարում է 1219 թվականը[5], Լ. Տեր-Պետրոսյանը՝ 1218/19[6], իսկ Ֆ. Մակլերը 1217 թ.[7]: Հարցի պարզաբանման համար դիմել ենք միջնադարյան աղբյուրներին: Թեև կան Հեթում Ախտուցի և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները, սակայն Հեթում Կոռիկոսցին և Հեթում պատմիչը վիճահարույց պայմանագիրը թվագրում են 1218 թվականով[8], բայց Սմբատ Սպարապետը պայմանագրի կնքման թվականը նշում է 1219-ը[9]՝ դրանով շփոթության մեջ գցելով հետազոտողներին: Չնայած այն բանին, որ Սմբատ Սպարապետը արժանահավատ աղբյուր է, բայց կան մի քանի աղբյուրներ, որոնք կասկած են հարուցում այդ պայմանագրիրը կնքելու ստույգ տարեթվի հարցում: Խնդրի պարզաբանմանը կարող է օգտակար լինել մի հաղորդում, որը պահպանվել է Սմբատ Սպարապետի Տարեգրքի մեջ: Նա նշում է, որ գերիներն ազատվեցին մեկ տարվա և 4 ամսվա գերությունից հետո[10]: Այստեղ շատ կարևոր է պարզել, թե երբ է տեղի ունեցել Կապանից դուրս՝ Շողական ամրոցի մոտի ճակատամարտը: Հայկական սկզբնաղբյուրների մեծ մասը հիշատակում է 1216 թվականը[11]՝ չնշելով ամիսը, իսկ Իբն Բիբին նշում է 1216 թ. աշունը[12]: Ինչ վերաբերում է մյուս սկզբնաղբյուրներին, ապա վերջիններս ձեռնպահ են մնում արշավանքի տարեթիվը նշելուց: Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կապանի ճակատամարտից հետո տեղի է ունեցել Շողական ամրոցի ճակատամարտը, ապա այն կարող էր առավելագույնը ձգվել մինչև 1217 թ. գարունը: Իսկ եթե 1217 թվականի գարնանը գումարենք մեկ տարի և 4 ամիս, ապա կստանանք 1218 թվականը:

Այսպիսով, հստակորեն կարելի է նշել, որ Կիլիկիայի հայկական թագավորության և Իկոնիայի սուլթանության միջև պայմանագիրը կնքվել է 1218 թվականին:

Պայմանագրի կնքման տարեթիվը պարզելուց հետո փորձենք քննություն կատարել նաև պայմանագրի բովանդակության և ռազմավարական հիմնադրույթների բնույթի շուրջ:

---

[4] Տե՛ս **Ռընե Գրուսե**, Պատմություն խաչակրաց և Երուսաղեմի ֆրանկ թագավորության, հ. Ա, Փարիզ,1934, թարգմանությունը կատարված է Լ. Տեր-Պետրոսյանի «Խաչակիրները և հայերը» աշխատությունում, հ. Ա, Եր., 2005, էջ 307, Լևանտի կայսրությունը, թարգմանությունը կատարված է Լ. Տեր-Պետրոսյանի «Խաչակիրները և հայերը» աշխատությունում, հ. Ա, էջ 340, **Ա. Ալպոյաճյան**, նշվ. աշխ., էջ 509-511, **Ա. Գալստյան**, Սմբատ Սպարապետ, Եր. 1961, էջ 16, **Boase T. S. R.** նշվ. աշխ., էջ 22, **Կ. Մութաֆյան**, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Եր., 2001, էջ 411, **Գ. Միքայելյան**, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Եր., 2007, էջ 172-175, **Mutafian C.** The Brilliant Diplomacy of Cilician Armenia, Armenian Cilicia, էջ 103:

[5] Տե՛ս **Վ. Տեր-Ղևոնդյան**, նշվ. աշխ., էջ 125:

[6] Տե՛ս **Լ. Տեր-Պետրոսյան**, նշվ. աշխ.,հ. Բ, էջ 297:

[7] Տե՛ս History of Armenia by Macler F. The Cambridge Medieval History, www.third-millennium-library.com

[8] Տե՛ս **Հեթում պատմիչ**, էջ 83, «Մանր ժամանակագրություններ», հ. Բ, էջ 63:

[9] Տե՛ս **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, էջ 219:

[10] Տե՛ս **Սմբատ Սպարապետ**, www.Vostlit.info

[11] Տե՛ս **Հեթում պատմիչ**, էջ 82, **Սամվել Անեցի**, էջ 146, **Ա. Մաթևոսյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԳ դարի, էջ 101:

[12] Տե՛ս **Ибн Биби.** Сельджук-Наме, www.vostlit.info

Քննարկելի թեմայի մասին սահմանափակ տեղեկություններ ենք գտնում «Հեթում Ախտուց Տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները» աշխատությունում, որտեղ հպանցիկ են անդրադառնում սույն պայմանագրին՝ նշելով, որ Լևոն արքան թշնամուն զիջեց Լուլուա բերդը. «Ի թվին ՌԿէ 1218 Հայոց թագաւորն Լևոն ետ ի հօռօմաց սուլտանն Զլուլուաբերդն...»[13]: Ինչպես նկատում ենք, շատ սակավ տեղեկություն է հաղորդվում: Պայմանագրի մասին շատ հակիրճ են խոսում նաև Հեթում Կոռիկոսցին և Հեթում Պատմիչը, որոնք նախ հաստատում են նախորդ պատմիչների վկայությունները, ապա ավելացնում, որ Իկոնիայի սուլթանությանն է տրվել նաև Լողատի բերդը. «... Թագաւորն Հայոց Լևոն ետ գին սուլտանին զբերդն Լուլվայ և ՁԼօղատի և ազատեաց զկալանաւոր իշխանսն իւր»[14]: Ի դեպ, Լողատիի բերդը Կիլիկիայի հայկական թագավորության համար ուներ ռազմավարական չափազանց կարևոր նշանակություն, քանի որ գտնվում էր Կալիկանդոսի երկու թևերի միջև և հսկում էր Քարուտ Կիլիկիայի արևմտյան մուտքը[15]: Նշված պայմանագրի մասին խոսում է նաև ԺԳ դարի նշանավոր դիվանագետ և զորավար Սմբատ Սպարապետը, համաձայն որի՝ ոչ միայն Լուլուա և Լողատի բերդերն են անցել Իկոնիայի սուլթանությանը, այլև Իսավրիայի գետը. «...և իւր ետ զԼուլուայ և զԻսաւրիոյ գետն և զանառիկ ծագն Լօղատի, և էառ զիւր իշխանքն»[16]: Փաստորեն, Սմբատ սպարապետը ևս մի նոր տեղեկություն է հաղորդում տվյալ պայմանագրի վերաբերյալ, այն է՝ Իսավրիայի գետը, որը նույնպես անցավ թշնամուն: Կարծում ենք, որ վերջինիս հաղորդած տեղեկությունը ճշգրիտ է, քանի որ նա, շուրջ 50 տարի լինելով Կիլիկիայի հայկական թագավորության սպարապետը, գրեթե միշտ մասնակցել է երկրում տեղի ունեցող քաղաքական գործընթացներին և քաջատեղյակ էր դեպքերին: Ճիշտ է՝ այս շրջանում նա դեռևս սպարապետ չէր, սակայն այդ դեպքերի ժամանակակիցն էր, և չի բացառվում, որ հայրը՝ Կոստանդին սպարապետը, կարող էր այդ փաստերը իրազեկել որդուն: Ըստ էության, ինչպես հայ պատմիչներն են վկայել, Իկոնիայի սուլթանությանն է զիջվել նշված ամրոցները և Իսավրիայի գետը:

Սույն պայմանագրի մասին տեղեկություններ է տալիս Միքայել Ասորի պատմիչը, որի տրամադրած վկայությունները առանձնապես կարևոր են: Խոսելով Լևոն Մեծագործի և սուլթան Իզզ էդ-դին Քեյ-Քավուսի միջև կնքված պայմանագրի մասին՝ հեղինակը նշում է, որ հայոց արքան պարտավորվեց ամեն տարի Իկոնիայի սուլթանին տրամադրել 300 զինվորական, ընդունել նրա գերիշխանությունը, ապա՝ երկու կողմերի միջև, ըստ պայմանագրի, պետք է հաստատվեին բարեկամական հարաբերություններ. «եւ յետ սակաւ աւուրց արարեալ սէր ընդ միմեանս, ետ թագաւոր Հայոց Լեւոն զբերդն Լլուայ եւ թափեաց զիշխանսն, որ ընբռնեալ էին, եւ խոստացաւ տալ Հոռոմոց սուլտանին յամենայն ամի երեք հարիւր ի ծառայութիւն և հնազանդեցաւ նմա...»[17] : Շատ հետաքրքիր է նաև պատմիչի այն պնդումը, թե հայոց արքան նման պայմանագիր է կնքել այն պատճառով,

---

[13] **Ա. Մաթևոսյան**,Հեթում Ախտուց Տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 1963, 4, էջ 190:

[14] **Հեթում պատմիչ**, ժամանակագրություն, www.digilib.am. Տե՛ս նաև «Մանր ժամանակագրություններ», հ. Բ, էջ 63:

[15] Տե՛ս **Կ. Մութաֆյան**, նշվ. աշխ., էջ 411:

[16] **Սմբատ Սպարապետ**, Պատմութիւն, Փարիզ, 1856, էջ 107-108:

[17] **Միքայել Ասորի**, էջ 512-513:

որ ծեր էր և հիվանդ[18]: Կարծում ենք՝ արքայի ծերությունը և հիվանդությունը միակ պատճառը չէին: Խնդիրն այն է, որ Լևոն Մեծագործը մեծ հարգանքով էր վերաբերվում Կոստանդին սպարապետին, որի հետ բավականին երկար համագործակցել էր: Բացի այդ, արքան չէր ցանկանում, որ սպարապետը մնա գերության մեջ, քանի որ ինքը արու զավակ չուներ, իսկ դուստրը դեռ մանկահասակ էր: Մտածելով թագավորության ճակատագրի մասին՝ Լևոնը հասկանում էր, որ իրենից հետո երկրում իրական իշխանություն կարող էր ձևավորել միայն Կոստանդին սպարապետը, ուստի որոշեց զիջումներ կատարել: Շարունակելով խոսել պայմանագրի մասին՝ պատմիչը նշում է, որ հայոց արքան համաձայնեց նաև իր զորքերով միանալ Իկոնիայի սուլթանության զորքերին դեպի Ռապան, Այնթափ, Հալեպ և այլ տարածքներ արշավելիս: Ինչպես նկատում ենք, Միքայել Ասորու ժամանակագրությունը բավականին օգտակար տեղեկություններ է տալիս և հստակեցնում պայմանագրի մթին ու վիճահարույց կողմերը: Գոյություն ունի նաև մի շատ կարևոր հաղորդում միջնադարի նշանավոր պատմիչ Իբն Բիբիի աշխատության մեջ[19]. այստեղ հեղինակը նախ տեղեկացնում է, որ հայոց արքայի և Իկոնիայի սուլթանի միջև ընթացող բանակցությունները և պայմանագրի կնքումը կատարվում էին Զիյադ էդ-դին Կարա-Արսլանի միջոցով, որը նախ հանդիպեց Լևոնին և ներկայացրեց սուլթանի պայմանները, ապա հանդիպեց Իզզ էդ-դին Քեյ-Քավուսին: Ըստ պայմանագրի՝ Կիլիկիայի հայկական թագավորությունը դառնում էր հարկատու, այսինքն՝ Իկոնիայի սուլթանին տարեկան վճարելու էր 20 000 խարաջին համարժեք ոսկի, չհաշված նվերները: Բացի այդ, Իկոնիայի սուլթանը ճանաչելու էր Լևոնին որպես Սսի տեր[20]: Կարծում ենք, որ այս հաղորդումը նույնպես ճիշտ է, քանի որ Լևոն արքան համաձայնել էր տարեկան տրամադրել 300 զինվոր և որոշ քանակությամբ գումար: Փաստորեն, Իբն Բիբին նույնպես չափազանց արժեքավոր տեղեկություններ է տրամադրում քննարկվելիք թեմայի մասին և նպաստում պայմանագրի բովանդակության ամբողջացմանը:

Այժմ տեսնենք, թե ինչ տեսակետներ են արտահայտում գիտնականները: Այս խնդրի մասին խոսում է ճանաչված պատմաբան Ռենե Գրուսեն, որը նշում է, որ գերիներին ազատելու համար հայոց արքան ստիպված էր վերադարձնել ոչ միայն Լարանդան (Կարաման), այլև Առակլին և Կեսարիան[21]: Ինչպես նկատում ենք, Ռ. Գրուսեն մի նոր տեսակետ է առաջ քաշում քննարկվող խնդրի վերաբերյալ: Տեղեկության ճշմարտացիությունը ապացուցելու համար կարևոր վկայություն ենք գտնում Սմբատ Սպարապետի Տարեգրքում: Հեղինակը, ինչպես արդեն նշել ենք, Իկոնիայի սուլթանության արշավանքի պատճառ է համարում այն, որ Լևոն արքան, օգտվելով Իկոնիայի սուլթանության թուլությունից, տարիներ առաջ գրավել էր Առակլին, Լարանդան և Կեսարիան[22]: Այստեղ հարց է առաջանում, թե ինչու հեղինակը իր աշխատության մեջ խոսելով պայմանագրի մասին, չի նշում այս տարածքների մասին ևս: Ըստ մեզ, եթե Իկոնիայի սուլթանությունն իր ար-

[18] Տե՛ս նույն տեղը:
[19] Տե՛ս **Ибн Биби.** Сельджук-Наме, www.vostlit.info
[20] Տե՛ս նույն տեղը:
[21] Տե՛ս **Ռընե Գրուսե**, էջ 307:
[22] Տե՛ս **Սմբատ Սպարապետ**, Պատմություն, էջ 107:

շավանքը ձեռնարկած լիներ նշյալ տարածքների համար, ապա, հաղթելով հայկական թագավորությանը, նրանք անպայման պետք է այդ տարածքների հարցը ևս ընդգրկեին պայմանագրում: Ամենայն հավանականությամբ Սմբատը չի ցանկացել հիշատակել այն բոլոր տարածքները, որ հիշյալ պայմանագրի հետևանքով կորցրեց հայկական թագավորությունը: Չպետք է մոռանալ նաև այն կարևոր փաստը, որ հայոց արքան այդ զիջումները հիմնականում կատարեց Սմբատի հոր՝ Կոստանդին Գունդստաբլին գերությունից վերադարձնելու համար: Նշյալ խնդրի մասին իր տեսակետն է արտահայտել նաև Արշակ Ալպոյաճյանը. ըստ նրա՝ հայոց արքան թշնամուն հանձնեց Լուլուա և Լողատի բերդերը, ինչպես նաև Իսավրիայի գետը[23]: Բացի այդ, հայոց արքան ընդունեց սուլթանի գերիշխանությունը՝ համաձայնելով մասնակցել նրա ծրագրած արշավանքներին դեպի Այնթափ, Հալեպ և այլ տարածքներ[24]: Ուսումնասիրվող հարցին անդրադարձել է նաև ականավոր պատմաբան Վ. Գորդլևսկին, որը այն տեսակետն է հայտնում, թե Կիլիկիայի հայկական թագավորությունը կախվածության մեջ ընկավ սելջուկներից և պարտավորվեց յուրաքանչյուր տարի որոշ քանակությամբ հարկ վճարել[25]: Նմանատիպ տեսակետ կա նաև Կիլիկյան Հայաստանի նշանավոր պատմաբան Գրիգոր Միքայելյանի աշխատության մեջ[26], որից կարելի է ենթադրել, որ երկու գիտնականներն էլ, ամենայն հավանականությամբ, օգտվել են միևնույն աղբյուրից: Հարկ ենք համարում նաև ընդգծել, որ երկու հեղինակներն էլ վերոնշյալ պայմանագրի մասին ուրիշ ոչ մի փաստ չեն հիշատակում: Մեզ հուզող թեմայի մասին սահմանափակ տեղեկություն է հաղորդում նաև Աշոտ Գալստյանը, որը խոսում է միայն Լուլուա և Լողատի բերդերի հանձման մասին[27]: Ինչպես նկատում ենք, հեղինակը մանրամասնորեն չի անդրադարձել վերը նշված խնդրին: Այս հարցին անդրադարձ է կատարել նաև Կիլիկյան Հայաստանի ճանաչված հետազոտող Սարգիս Բոռնազյանը, համաձայն որի՝ հայկական թագավորությունը պարտավորվեց Իկոնիայի սուլթանությանը վճարել որոշակի տուրք, ինչպես նաև ամեն տարի հանձն առավ սուլթանին տրամադրել 300 զինվոր[28]: Կարծում ենք՝ հեղինակի աշխատության մեջ առաջ քաշված տեսակետը բավականին կարևոր է մեր հարցի քննության առումով: Լևոն Մեծագործի և սուլթան Իզզ էդ-դին Քեյ-Քավուսի միջև տեղի ունեցած հաշտության բանակցություններին և նրանց միջև կնքված պայմանագրին մասնակիորեն անդրադարձել են նաև Թ. Բոեյզը, Վ. Տեր-Ղևոնդյանը և Կ. Մութաֆյանը: Վերջիններս համառոտ խոսում են Կիլիկիայի հայկական թագավորության և Իկոնիայի սուլթանության միջև տեղի ունեցած պատերազմների մասին, սակայն պայմանագրային դրույթներից նշում են միայն այն հանգամանքը, որ հայերը թշնամուն զիջեցին Լուլուան և Լողատին[29]: Փաստորեն, այս հետազոտություններում նույնպես բացակայում է դիվանագիտական փաստաթղթի մասին քննությունը: Մեզ հուզող խնդրին որոշ անդրադարձ է կատա-

---

[23] Տե՛ս **Ա. Ալպոյաճյան**, նշվ. աշխ., էջ 511:
[24] Տե՛ս նույն տեղը:
[25] Տե՛ս **Гордлевский В.**, նշվ. աշխ., էջ 15:
[26] Տե՛ս **Գ. Միքայելյան**, նշվ. աշխ., էջ 172-175:
[27] Տե՛ս **Ա. Գալստյան**, նշվ. աշխ., Եր., 1961, էջ 16:
[28] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», էջ 643:
[29] Տե՛ս **Boase T.** նշվ. աշխ., էջ 22, **Վ. Տեր-Ղևոնդյան**, նշվ. աշխ., 125, **Կ. Մութաֆյան**, նշվ. աշխ., էջ 410-411:

ռել նաև Լ. Տեր-Պետրոսյանը, սակայն որևէ նոր տեսակետ պայմանագրի դրույթների մասին չի արտահայտում:

Այսպիսով, տեղեկանալով միջնադարյան սկզբնաղբյուրների հաղորդումներին և հետազոտելով գիտական գրականությունը՝ հանգում ենք այն եզրակացության, որ Կիլիկիայի հայոց արքա Լևոն Մեծագործի և Իկոնիայի սուլթան Իզզ էդ-դին Քեյ-Քավուսի միջև կնքված պայմանագրի հիմնական բովանդակությունը հետևյալն է.

1. Կիլիկիայի հայկական թագավորությունն ընդունում էր Իկոնիայի սուլթանության գերիշխանությունը:

2. Հայկական թագավորությունը Իկոնիայի սուլթանությանն էր հանձնում Լողատի և Լուլուա բերդերը, ինչպես նաև Իսավրիայի գետը:

3. Հայոց արքան պարտավորվում էր նաև Իզզ էդ-դին Քեյ-Քավուսին հանձնել Առակլին, Լարանդան և Կեսարիան:

4. Լևոն արքան պարտավորվում էր մասնակցել Իկոնիայի սուլթանության ապագա արշավանքներին դեպի Այնթափ, Հալեպ և մի շարք այլ տարածքներ:

5. Կիլիկյան հայկական թագավորությունը դառնում էր հարկատու Իկոնիայի սուլթանությանը:

6. Լևոն Մեծագործը խոստանում էր սուլթանին տրամադրել տարեկան 300 զինվորական:

7. Հայկական թագավորությունը վճարելու էր նաև ռազմատուգանք՝ շուրջ 20000 ոսկի խարաջ և բազում նվերներ[30]:

8. Սուլթան Իզզ էդ-դին Քեյ-Քավուսը ճանաչում էր Լևոն արքային՝ որպես Սսի տիրակալ[31]:

9. Իկոնիայի սուլթանությունը պարտավորվում էր ազատել և հայրենի երկիր վերադարձնել Կոստանդին սպարապետին և մյուս գերյալ իշխաններին:

10. Երկու պետությունների միջև հաստատվում են բարեկամական հարաբերություններ:

Փաստորեն, Կիլիկիայի հայկական թագավորությունը այս պայմանագրով առժամանակ կախվածության մեջ ընկավ Իկոնիայի սելջուկյան սուլթանությունից: Խոսքը հատկապես վերաբերում էր արտաքին քաղաքական հարցերին: Եթե պայմանագրում որևէ խոսք չկա Կիլիկիայի ներքին քաղաքական կառավարման մասին, ապա արտաքին քաղաքականության մեջ որոշակի փոփոխություններ էին նկատվում: Ընդ որում, կարևոր հանգամանք է դառնում այն, որ հայկական թագավորությունը պարտավորվում էր մասնակցել Իկոնիայի սուլթանության ռազմական արշավանքներին դեպի արևելք և մասնավորապես՝ Հալեպ: Հայկական թագավորության հռչակումից հետո սա, ըստ էության, առաջին ուշագրավ պայմանագիրն էր, որը ուներ Կիլիկիայի հայկական թագավորության արտաքին քաղաքականությանը վերաբերող հիմնադրույթներ: Պետք է նշել նաև, որ թեև Լևոն արքան ըստ պայմանագրի համաձայնեց մասնակցել Իկոնիայի սուլթանության ռազմական արշավանքներին, սակայն կարճ ժամանակ անց խուսափեց դեպի Հալեպ արշավանքից[32]: Այս փաստը խոսում է այն մասին, որ

[30] Տե՛ս **Ибн Биби.** Сельджук-Наме, www.vostlit.info
[31] Տե՛ս նույն տեղը:
[32] Տե՛ս **Միքայել Ասորի**, էջ 513-514:

տվյալ պայմանագրով Լևոն Մեծագործի զիջումները ժամանակավոր էին, և հայկական թագավորությունը բնավ էլ մտադիր չէր իր արտաքին քաղաքականությունը պահել կախվածության մեջ և դառնալ ենթակա մի երկիր:

Փաստորեն, Լևոն արքան իր մահից առաջ կրկին ապացուցեց, որ ինքը չափազանց խելացի միապետ է: Ահա այսպիսի իրավիճակ ստեղծվեց Կիլիկիայի հայկական թագավորության արտաքին քաղաքականության ասպարեզում Լևոն Մեծագործի և Իկոնիայի սուլթան Իզզ էդ-դին Քեյ-Քավուսի միջև կնքված հաշտության պայմանագրից հետո:

АРАМ ОГАНЕСЯН – ***Договор о мире между Киликийской Армении и Иконийским сельджукским султанатом (1218).*** – Статья посвящена истории отношений между Киликийским армянским царством и Иконийским султанатом. В ней впервые подробно изложены основные положения мирного договора, заключённого между царём Левоном и султаном Изз эд-Дином Кей-Кавусом.

Ссылаясь на средневековые источники, а также разнообразную научную литературу, автор истолковывает основные положения этого документа, анализирует дату его заключения и доказывает, что договор был заключён не в 1219-м, а в 1218 году.

ARAM HOVHANNISIAN - ***On the peace treaty signed in 1218 between the Cilician Kingdom of Armenia and the Seljuk Sultanate of Ikonia.-*** The present paper focuses on the history of the relationship between the Cilician Kingdom and the Sultanate of Iconia. It is for the first time that the issues in the peace treaty signed between King Levon B and Izz ad-din Kei-Kauz have been highlighted.

On the basis of medieval sources and research data, the author expresses a number of key viewpoints both on the treaty and its main provisions. Having delved deeper into the date when the treaty was signed, the paper produces evidence that the treaty was made in 1218 and not in 1219, as it had been believed earlier.